<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/09-1>>

ք. Վանաձոր «05» մարտի 2021թ.

<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-ը, ի դեմս Ա.Ա.Ղուլիջանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Էտաժ>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Վ.Սաքանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-վճարման ժամանակացուցով նախատեսված տնտեսական ապրանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից

փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 493 728 /Չորս հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր քսանութ/ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված

արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2021թ. կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ

որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ	<<էտաժ>>ՍՊԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	ք.Վանաձոր, Գր. Լուսավորիչի 52
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ	<< ՅՈՒՆԻ ԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 1570015001210100	Հ/Հ 24101009048800
ՀՎՀՀ 06902087	ՀՎՀՀ 06946784
Տնօրեն՝ Ա.Ա. Լուիջանյան	Տնօրեն՝ Է.Ա.Սաքանյան

Հավելված N 3

«05» մարտի 2021թ. կնքված

<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/09-1>>ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ սպորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները ՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«05» մարտի 2021թ. կնքված

<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/09-1>>ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <<Էտաժ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021թ. մարտի 5-ին կնքված N *<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/09-1>>* պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2021թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Հավելված N 2
«05» մարտի 2021թ. կնքված
<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/09>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի									
...ումների ...կանով ...խատես...ված	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակ	Ժամկետը
...831243	Լվացքի փոշի ավտոմատ	Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %, ԳՕՍՏ 25644-96: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն	կգ	580	23200	40	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	40	2021թ.-ի ընթացքում
...61000	Զուգարանի թուղթ, ռուլոնով	<<Օբուխով>> Կամ համարժեք, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի":	հատ	108	25920	240	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	240	2021թ.-ի ընթացքում

331240	Սպիտակեցնող հեղուկ լվացքի /ժավելի սպիրտ/	Սպիտակեցնող և ախըահանիչ հատկություններով հեղուկ ,,Լիլուս,, կամ համարժեք	լիտր	330	1650	5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	5	2021թ.-ի ընթացքում
31240	Ձեռքի օճառ հեղուկ	Մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպե-րի պարունակությունը՝ ոչ ավել 0,5%-ից, փրփրագոյացնող հատկությունը՝ ոչ պակաս 300 սմ3-ից, անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N	լիտր	665	25270	38	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	38	2021թ.-ի ընթացքում
1480	Ձեռքի օճառ , 70գր	Ձեռքի օճառ 100գ-ոց չորսուների, կտորների և այլ ձևերով, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ԳOUS 28546-2002	հատ	90	18000	200	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	200	2021թ.-ի ընթացքում
1480	Օճառ ոջիլի	օճառ 100գ-ոց չորսունների, կտորների կամ այլ ձևերով, հակաոջիլային	հատ	290	870	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	2021թ.-ի ընթացքում
1210	Հեղուկ ամաև լվանալու, 0,5լ	Մածուկանման զանգված, օգտագործված հոտավորիչի հոտով, գույնը՝ ըստ լվացող միջոցների գույնի որոշման սանդղակի, խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 50%, պոլիմերային կամ ապակե տարաներում՝ 200գ-ոց զանգվածով: Անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 16.12.2004թ.-ի հաստատված 1795-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգին համապատասխան	հատ	570	19950	35	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	35	2021թ.-ի ընթացքում

831100	Հեղուկ պատուհան մաքրելու համար, 0,5	Թափանցիկ, սադաֆածայլ հեղուկ,,,Barf,, կամ համարժեք, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ԳՕՍՏ 28546-2002, **500մլ տարաներով**	լիտր	320	800	2,5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2,5	2021թ.-ի ընթացքում
831100	Լեղակ լվացքի /ավտ.մեք./	Հեղուկ լվացքի համար	լիտր	210	105	0,5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	0,5	2021թ.-ի ընթացքում
831247	Սպիտակեցնող հեղուկ լվացքի	Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ ավտոմատ մեքենայի լվացքի համար	լիտր	370	740	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
31278	Սպասք մաքրող փոշի	Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորված հատիկավոր փոշի: Անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 16.12.2004թ.-ի հաստատված 1795-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգին համապատասխան	հատ	330	13860	42	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	42	2021թ.-ի ընթացքում
21490	Միլ կաթսա մաքրելու համար	Մետաղալար կաթսաներ փայլեցնելու համար	հատ	100	460.0	46	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	46	2021թ.-ի ընթացքում
21490	Սպունգ, աման լվանալու	Ուղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով	հատ	100	10700	107	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	107	2021թ.-ի ընթացքում
11300	Հոտազերծիչ /աերազոլ/	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, թարմ ծաղկային բուրմունքով	հատ	450	13500	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	30	2021թ.-ի ընթացքում
31247	Հեղուկ սանհանգույց մաքրելու համար	<<Կրոտ>> կամ համարժեք, 1լ տարողությամբ /տարան կապրոնե/	լիտր	600	1800	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	2021թ.-ի ընթացքում
21130	Ձեռնոց ռետինե տնտ.	Ձեռնոցներ ռետինե XL չափի, հաստությունը՝ 0,2-0,4 մմ, երկարությունը 300 մմ ոչ պակաս, ըստ ԳՈՍՏ 20010-93 կամ համարժեք:	զույգ	180	5400	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	30	2021թ.-ի ընթացքում
1470	Փրփուր սափրվելու համար	Փրփուր սափրվելու համար ,,ARCO,, կամ համարժեք	հատ	350	4200	12	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	12	2021թ.-ի ընթացքում

3711470	Ածելիի սայրեր սափրվելու համար,10	Սափրող ածելիների սայրեր ,,Դապիռա,, կամ համարժեք	հատ	2000	24000	12	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	12	2021թ.-ի ընթացքում
835000	Ձող հատակ մաքրելու փայտե	1,5-2 մ երկարության փայտե, լաքապատված:	հատ	1600	4800	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	2021թ.-ի ընթացքում
831283	Լաթ հատակ մաքրելու համար	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից	հատ	800	8000	10	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	10	2021թ.-ի ընթացքում
831240	Լվացող միջոց գորգերի համար	Թափանցիկ, սադաֆափայլ, ..Золушка,, կամ համարժեք:	հատ	415	2075	5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	5	2021թ.-ի ընթացքում
831282	Կտոր սեղանը մաքրելու համար	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից, 20*20սմ:	հատ	100	3000	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	30	2021թ.-ի ընթացքում
221480	Խոզանակ զուգարան մաքրելու	Նախատեսված զուգարան մաքրելու համար	հատ	600	1200	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
224332	Դույլ ցինկապատ, չժանգոտող	Դույլ մետաղյա, XIII, XII, OH խմբերի նրբաթերթ շիկացինկապատ պողպատից, 0,35-0,55 մմ պողպատի անվանական հաստությամբ, ГОUS 20558-82, ГОUS 24788-2001 կամ համարժեք	հատ	1660	1660	1	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1	2021թ.-ի ընթացքում
42100	Սփռոց պոլիէթիլենային	Սովորական , նախատեսված սեղանների համար:	մետր	1000	16000	16	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	16	2021թ.-ի ընթացքում
42100	Վարագույր պոլիէթիլենային	Սովորական գունավոր, հարմարեցված կախելու համար:	հատ	3330	13320	4	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	4	2021թ.-ի ընթացքում
41000	Պոլիէթիլենային պարկ, աղբի,100	Սովորական, նախատեսված աղբի համար	հատ	415	9960	24	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	24	2021թ.-ի ընթացքում
41000	Պոլիէթիլենային պարկ, 100հատ	Սովորական	հատ	830	830	1	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1	2021թ.-ի ընթացքում
31210	Լուսադիոդային լամպ	ԼԵԴ լամպ, 12Վտ՝ հավասարազոր 100Վտ, Ա60, չափերը՝ 60*106մմ, Ե27, 50/60 Հց, լարումը՝ 176-264 Վ, գունային ջերմ.՝ 2700Կ, լուս. հոսք՝ 900լմ, 30000 աշխ.ժամ: **Երաշխիք՝ ապրանքը ընդունելու օրվանից հաշված 1 տարի:**	հատ	700	21000	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	30	2021թ.-ի ընթացքում

1531220	Լուսադիոդային լամպ	ԼԵԴ լամպ, 25Վտ՝ հավասարազոր 250Վտ, Ա60, չափերը՝ 60*124մմ, Ե27, 50/60 Հg, լարումը՝ 176-264 Վ, գունային ջերմ.՝ 4000Կ, լուս. հոսք՝ 2100լմ, 30000 աշխ.ժամ: **Երաշխիք՝ ապրանքը ընդունելու օրվանից հաշված 1 տարի:**	հատ	1600	8000	5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	5	2021թ.-ի ընթացքում
1531300	Լուսադիոդային լամպ	ԼԵԴ լամպ, 30Վտ՝ հավասարազոր 300Վտ, Ա70, չափերը՝ 70*141մմ, Ե27, 50/60 Հg, լարումը՝ 176-264 Վ, գունային ջերմ.՝ 6500Կ, լուս. հոսք՝ 2700լմ, 30000 աշխ.ժամ: **Երաշխիք՝ ապրանքը ընդունելու օրվանից հաշված 1 տարի:**	հատ	1600	8000	5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	5	2021թ.-ի ընթացքում
4521120	Փական դռան ներդրովի, 90*145	Դռան ներդրովի կողպեք բանալիներով,ԳՕՍՏ 5089-2003 կամ համարժեք, արտասահմանյան արտադրության	հատ	5800	17400	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	2021թ.-ի ընթացքում
521170	Փական դռան կախովի	Դռան կախովի կողպեք, նիկելապատ, երկու բանալիով, ըստ տեխնիկական փաստաթղթի	հատ	2300	6900	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	2021թ.-ի ընթացքում
521150	Փական պահարանի ներդրովի	Պահարանի ներդրովի կողպեք բանալիներով,ԳՕՍՏ 5089-2003 կամ համարժեք, արտասահմանյան արտադրության	հատ	5800	11600	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
521200	Դռան փականի միջուկ	Սովորական արտասահմանյան արտադրության	հատ	2300	18400	8	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	8	2021թ.-ի ընթացքում
192620	Սեխ	Տարբեր չափերի՝ (0,8-8,0) մմ ձողիտրամագծովև (5-250) մմ երկարությամբ, ԳՕՍՏ 283-75, տեղական արտադրության	կգ	810	810	1	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1	2021թ.-ի ընթացքում
531130	Փայտի պտուտակներ	Սովորական, տարբեր չափերի	հատ	60	12000	200	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	200	2021թ.-ի ընթացքում
911200	Սոսինձ էմուլսիա	Սոսինձ պոլիվինիլացետատային դիսպերսիայի հիմքով, թղթի, ստվարաթղթի, լինոլեումի, երեսպատման սալիկների, փայտե իրերի սոսնձման համար՝ 900գր-ոց, չափածրարված պոլիմերային տարաների մեջ/ կամ այլ տարողության մեջ/	կգ	1040	3120	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	2021թ.-ի ընթացքում
11700	Սոսինձ «Ակֆիքս»/կամ համարժեք	Երկկոմպոնենտ, ունիվերսալ, 200մլ, բարձր կպչունակության պոլիմերային սոսինձ:	տուբ	1800	1800	1	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1	2021թ.-ի ընթացքում
11600	Սիլիկոնե քսուք	Նախատեսված տարբեր վերանորոգման հետ կապված աշխատանքների համար:	հատ	1000	2000	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում

651400	Մեկուսիչ ժապավեն պոլիէթիլենային	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, ԳՕՍՏ 20477-86	հատ	160	320	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
192232	Սկոթչ թղթե, 5*10սմ	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ, ԳՕՍՏ 20477-87	հատ	830	8300	10	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	10	2021թ.-ի ընթացքում
684400	էլ. վարդակ, անջատիչ	Վարդակ 1 կամ 2 տեղանոց պլաստմասսայե UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավո¬րումնե-րին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հատ	540	2700	5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	5	2021թ.-ի ընթացքում
86000	Խրոց	220Վ լարման, 16 Ա հզորության, երկու միացման և հողանցման լատունե կոնտակտներով, արտաքին դետալները կարբոնապլաստմասե: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"	հատ	290	290	1	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1	2021թ.-ի ընթացքում
11100	Մետաղալար պղնձե բազմերակ,2,5մմ	Բարձր որոկի, նախատեսված մոնտաժային աշխատանքների համար:	մետր	215	6450	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	30	2021թ.-ի ընթացքում
41000	Մարտկոց ջրատաքացուցիչի	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AAA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	հատ	205	410	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
2000	Մարտկոց ժամացույցի	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար,1.5վ, AA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	հատ	80	2400	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	30	2021թ.-ի ընթացքում

641100	Միաֆազ ավտոմատ, 20-32Ա	Հալուն ապահովիչ՝ 32 Ա անվանական հոսանքով, լարումը՝ 220 Վ: Նախատեսված է գերբեռնման և կարճ միացումների ժամանակ ուժային գծերի պաշտպանության համար: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:	հատ	910	4550	5	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	5	2021թ.-ի ընթացքում
641100	Եռաֆազ ավտոմատ	Հալուն ապահովիչ՝ 100 Ա անվանական հոսանքով, լարումը՝ 380 Վ, ըստ ԳՕՍՏ 17242-86 կամ համարժեք (ՊՆ- 2), նախատեսված է գերբեռնման և կարճ միացումների ժամանակ ուժային գծերի պաշտպանության համար: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի	հատ	830	830	1	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1	2021թ.-ի ընթացքում
31490	Լվացարանի սիֆոն	Պլաստմասե, համապատասխան լվացարանների չափերի:	հատ	2200	4400	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
31470	Ջրի ծորակի պահեստամասեր	Լավ որակի, նախատեսված չափերի:	հատ	830	3320	4	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	4	2021թ.-ի ընթացքում
11110	Ծորակ ջրի	Կիսաշրջանաձև ծորակ, 1 փականով, նիկելապատված: Իտալական արտադրության կամ համարժեք	հատ	3300	19800	6	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	6	2021թ.-ի ընթացքում
31470	Բաղնիքի ցնցուղ	Սովորական, արտասահմանյան արտադրության, նիկելապատ		3300	3300	1	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1	2021թ.-ի ընթացքում
11740	Զուգարանակոնքի պահեստամասերի հավաքածու	Լավ որակի, նախատեսված չափերի:	հատ	4100	8200	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
11411	Ներկ էմալե ,,Նացիոնալ,, կամ համարժեք	Ներկ ջրաէմուլսիոն«Նացիոնալ» կամ համարժեք	կգ	1160	28188	24,3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	24,3	2021թ.-ի ընթացքում
21460	Վրձին ներկարարական	Նախատեսված վերանորոգման աշատանքների համար տարբեր չափերի:	հատ	660	1980	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	2021թ.-ի ընթացքում
11220	Վալիկ ներկարարական	Նախատեսված վերանորոգման աշատանքների համար տարբեր չափերի:	հատ	1700	6800	4	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	4	2021թ.-ի ընթացքում

163170	Խողովակ ռետինե ճկուն	Բարձր որակի, ամուր ռետինից:	մետր	1490	2980	2	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	2	2021թ.-ի ընթացքում
31500	Լուծիչ 0,5լ	Սովարական, նախատեսված շինարարական աշխատանքների համար	հատ	570	5130	9	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	9	2021թ.-ի ընթացքում
21130	Բանվորական ձեռնոց	Լավ որակի, նախատեսված չափերի:	զույգ	290	1740	6	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	6	2021թ.-ի ընթացքում
11200	Ցեմենտ, 50 կգ	Միատարր, փակ գործարանային պարկերով	պարկ	2300	9200	4	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	4	2021թ.-ի ընթացքում
11100	Ավազ, 1 խ.մ.	Միատարր, փակ գործարանային պարկերով	պարկ	600	6000	10	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	10	2021թ.-ի ընթացքում
					493728				

ակարարումը իրականացվում է ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող քանակների և մատակարարման ժամկետների, արարումներն իրականացվում են պատվերի ներկայացմանը հաջորդող 2 օրվա ընթացքում: Պայմանագիրը գործելու է մինչև 2021թ. բերի 20-ը: Մատակարարման վայրը՝ **ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57**:

ումները կատարվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 20-րդ բանկային օրը, նախորդ ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Մատակարի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ջագրի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

նքի վրա պարտադիր պետք է առկա լինի ֆիմայի նշանը: Ապրանքը չպետք է լինի օգտագործված կամ մնասված: Հանձնման պահին ելիության ժամկետի 1/2 առկայություն:

ԳՆՈՐԴ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57
ԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
ՀՀ 15700150012101 00
ՀՎՀՀ 06902087
նօրեն՝ Ա.Ա.Պոլիջանյան
Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<Էտաժ>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Գր. Լուսավորիչի 52
<< ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձորմ/ճ
ՀՀ 24101009048800
ՀՎՀՀ 06946784
Տնօրեն՝ Վ. Պալբանյան
Կ.Տ.

Հավելված N 3
«05» մարտի 2021թ. կնքված
<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/09>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

...	Ապրանքի											
	անվանումը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
		մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	Տնտեսական ապրանքներ		54860	109720	164580	219440	274300	329160	384020	438880	493728	**493728**
		0	54860	109720	164580	219440	274300	329160	384020	438880	493728	**493728**

...ն ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Ընդամենը՝ Չորս հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր քսանութ դրամ:

ԳՆՈՐԴ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57
...ՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
ՀՀ 1570015001210100
ՀՎՀՀ 06902087
Տնօրեն ՝ Ա.Ա.Ղուկասյան

<<Էտաժ>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Գր. Լուսավորիչի 52
<< ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձորմ/ճ
ՀՀ 24101009048800
ՀՎՀՀ 06946784
Տնօրեն՝ Վ. Սաքանյան